

ՄԱՐՄԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆՈՒԱԾ 1940-ԻՆ

21.10.2009

ՀԻՄՆԱԴԻՐ ՍՈՒՐԵՆ ՇԱՍԼԵԱՆ

ԳԻՆ 75 ՂՐԶ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ԲԱՐՉՐԱՍՏԱԿԱՐԴԱԿ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՉ



Պէյրութի մեր պատուակալ աշխատակից Պր. Կարօ Արքայապետին ստացանք հետևեալ տեղեկատուութիւնը.-

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի Պէյրութ անցքէն հազիւ շաբաթ մը ետք, քաղաքին արուարձանը նկատուող Ճիւնի գիւղաքաղաքին գեղատեսիլ մէկ բլուրին վրայ գտնուող Քասալիքի Ս. Հոգի Համալսարանի յարկին տակ, տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Նարեկացիի նուիրուած միջազգային Բ. գիտաժողովը: Հոկտեմբեր 12էն 14 թուականներուն երկարած եռօրեայ գիտաժողովը կը վաչեյէր նախագահութիւնը Ամեն. եւ Գեր. Տէր Ներսէս Պետրոս ԺԹ.ի (Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց) եւ հովանաւորութիւնը՝ Վսեմ. Կարգինալ Լէոնարտօ ՍԱՆՏՐԻԻ

Շար. Կարդայ Բ. էջ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ

Շար. Ա. էջ 6

(Նախագահ Արեւելեան Եկեղեցիներու Ս. Ժողովի), Վսեմ. Կարգինալ Ուիլիամ Ժողէֆ Լեվ ԱՏԱԻ (Նախագահ Հաւատոյ եւ Կրօնից Ս. Ժողովի), Գերբըջ. Կարգինալ Մար Նասրալլա Պ. ՍՖէՅՐԻ (Մարոնի Պատրիարք Անտիոքի, Դիւանապետ Քասալիքի Ս. Հոգի Համալսարանի Աստուածաբանութեան Քահանայապետական Բաժանմունքի): Գիտաժողովը կազմակերպուած էր Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան կողմէ, սերտ գործակցութեամբը Հոռմի Արեւելեան Քահանայապետական Կաճառին եւ Քասալիքի Ս. Հոգի Համալսարանի Ծիսագիտութեան Ամպիոնին: Գրիգոր Նարեկացիի նուիրուած միջազգային առաջին գիտաժողովը, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբը Պապական Արեւելեան Հիմնարկին, տեղի ունեցած էր Հոռմի մէջ, 20-22 Յունուար 2005 թուականներուն: «Ս. Գրիգոր Նարեկացի Աստուածաբան եւ Միսթիկ» խորագրեալ այս գիտաժողովին ղեկուցումները Ժան-Փիլէք Մասէի եւ Հայր Լեոն Զէքիեանի խմբագրութեամբ հաւաքուած էին «Saint Gregoire De Narek. Theologien Et Mystique» խորագրեալ հատորի մը մէջ, եւ յաջորդ տարին իսկ հրատարակուած Հոռմի մէջ իբրեւ Orientalia Christiana Analecta շարքին թիւ 275-ը:

Նման Հոռմի գիտաժողովին, Քասալիքի գիտաժողովին ալ ի մի բերուած էին բազմաթիւ հայագէտներ եւ աստուածաբաններ: Գիտաժողովը ընթացաւ ըստ տպագրուած պաշտօնական յայտարարին, եւ բացման նիւտին ներկայ գտնուեցան Կարտինալ Մար Նասրալլա Սֆէյր Պատրիարք Մարոնի եկեղեցւոյ, Ամեն. Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Պատրիարք Հայ Կաթողիկէներու, Ամեն. Քլաւտիօ Կուճերթի՛ առաքելական Նուիրակ Վրաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի, Ամեն. Նարեկ եպսկ. Ալեքսէմէզեան՝ ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ամեն. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեան՝ ներկայացուցիչ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Վերապ. Մկրտիչ Գարակէօզեան՝ նախագահ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու, Հայր Փօլ Րուհանա՝ Վարիչ Քասալիքի համալսարանի աստուածաբանական բաժանմունքին, եւ բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներ, ինչպէս նաեւ Քասալիքի համալսարանի դասախօսներ եւ ուսանողներ:

Հակառակ որոշակի բացակութիւններու, գիտաժողովը տեղի ունեցաւ բազմալեզու գիտական մակարդակով ղեկուցումներու ներկայացումով: Ամփիթատրոնի մոլտքին, մասնակիցներուն կը տրամադրուէր օրուայ բանախօսութիւններուն երկլեզու պատճէնները: Գիտաժողովին առթիւ, համալսարանի դասախօսներէն, յայտնի երաժշտագէտ, խմբավար, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի «Կուռնկ» երգչախումբի ղեկավար՝ Դոկտ. Եղուարդ Թորիկեան, պատրաստած էր «Ս. Գրիգոր Նարեկացի. Վեց Տաղեր եւ Աղօթք մը» խորագրեալ յատուկ խտասալիկ մը, կատորդութեամբ յայտնի մեներգիչներու եւ «Կուռնկ» երգչախումբի:

Գիտաժողովին փակումը կատարուեցաւ համալսարանի մատրոն մէջ, հայկական փառաւոր պատարագով մը, մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ Պատրիարքին, հոգեւորականութեան եւ «Կուռնկ» երգչախումբին: Եկեղեցւոյ մոլտքին կը տրամադրուէր Փրանսերէն եւ հայերէն «La Divine Liturgie En Rite Armenien» խորագրեալ երկլեզու գրքոյկ մը: Մատուցուած բառացիօրէն յորդած էր գիտաժողովի մասնակիցներու, համալսարանի աստուածաբանական ճեմարանի դասախօսներու եւ աշակերտներու ներկայութեամբ: Գիտաժողովի փակումէն ետք, երեկոյեան, Համալսարանի ամփիթատրոնին մէջ, խմբավարութեամբ Դոկտ. Եղուարդ Թորիկեանին, «Կուռնկ» երգչախումբի կողմէ, սարքուեցաւ հոգեւոր համերգ մը: Գիտաժողովի կազմակերպիչները, յաջորդ օրուան համար յատուկ միօրեայ ուխտագնացութիւն մը կազմակերպած էին, մասնակցող բանախօսներուն համար: Լիբանանի Հայ Կաթողիկէ համայնքի գարաւոր պատմութեան նուիրուած հայագէտներու կողմէ կազմակերպուած էր սկսէր նախապէս հայ Կաթողիկէ Անտոնեան ուխտին պատկանող, լեռնալիբանանի Ղազիր աւանին մէջ գտնուող Պէյթ խաչապոյի Ս. Անտոն վանքով: Այցելութիւնը ապա շարունակուեցաւ, անցեալին կրկին Անտոնեան ուխտին պատկանած Ղոսթա շրջանին մէջ գտնուող Քրէյմի Ս. Փրկիչ վանքին: Զոյգ այս վանքերուն իրմաստ մըցելութիւնները տարբեր տրուած անցել ալ կ'ունենար, մանաւանդ որ հայ եկեղեցւոյ (Կաթողիկէ թէ առաքելական) ամենակարկառուն հոգեւորականներէն, Կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռին ամենահանգամանալի դէմքերէն՝ Մաղաքիա Օրմանեան իբրեւ Անտոնեան ուխտի միաբան գտնուած էր երկու վանքերուն մէջ ալ: Վերջին այցը կը տրուէր Զմմաւի, 1749-ին հիմնադրուած, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարքական աթոռի գարաւոր կայք, Զմմաւի Տիրամօր վանքը: Կէսօր-



ուայ ճաշի մը շուրջ կը հաւաքուէին գիտաժողովի բոլոր մասնակիցները:

Կ'արժէ նշել թէ գիտաժողովի երկրորդ օրուայ երեկոյեան, Հայ Կաթողիկէ Համալսարանական Միութիւնը, Պէյրութի Հայ Կաթողիկէ պատրիարքարանի «Արարատեան» սրահին մէջ կազմակերպած էր ազատ ամպիոն մը «Հայաստան-Սփիւռք Յարաբերութիւն» Այսօր եւ Վաղը» թեմային շուրջ: Այժմէական այս նիւթին մասին ղեկուցեց գիտաժողովի կազմակերպիչ յանձնախումբէն՝ ծանօթ ակադեմական-մտաւորական-հոգեւորական Դոկտ. Հայր Լեոն Վրդ. Զէքիեան, հարցազրուցավար ունենալով ծանօթ լրագրող, հայ կաթողիկէ պատրիարքարանի կիսապաշտօնակից թէ «Մասիս» ամսագրի խմբագիրներէն՝ Սարգիս Նաճարեանը:

Գրիգոր Նարեկացիի նուիրուած «Ս. Գրիգոր Նարեկացիի եւ Եկեղեցւոյ Ծիսակատարութիւնը» խորագրեալ միջազգային Բ. գիտաժողովը իր աւարտին հասնելով հանդերձ, կազմակերպիչները Հայ Կաթողիկէ Պատրիարքարանը, Քասալիքի Ս. Հոգի Համալսարանի Աստուածաբանական Ճեմարանի Վարչութիւնը, եւ մանաւանդ գիտաժողովի քարտուղարութեան Եւրոպայի եւ Լիբանանի պատասխանատուներ՝ Դոկտ. Հայր Լեոն Մ. Վրդ. Զէքիեան եւ Դոկտ. Հայր Անդրանիկ Մ. Վրդ. Կուռնեան, սիրտ մաշեցնող բայց հաճելի խմբագրական աշխատանքով մը փառաւոր հատոր մը մէջ պիտի հաւաքեն գիտաժողովին ներկայացուած բոլոր ղեկուցումները:

Նշենք որ բազմաթիւ ղեկուցողներ ընդհանրապէս մայր թէմային կը մօտենային ուրոյն տեսանկիւններէ: Յայտագրին մէջ կը գտնենք ղեկուցումներ հետեւեալ խորագիրներով.

- * Աստուծոյ ճանաչումը եւ Ծիսակատարութիւնը,
- * Հայ Վանականութիւնը եւ Թ-ԺԱ դարերու պատմական շրջափոքը,
- * Վասպուրականի արքայներն ու իշխանները Հայ Եկեղեցւոյ հանդէպ:
- * Նարեկայ վանքն ու Դպրոցը:
- * Վանական կանոնն ու կանոնապահութիւնը:
- * Հայ Վանական Ծիսակատարումը:
- * Վանքը որպէս օրինակ Տիեզերական Եկեղեցիին:
- * Նարեկ եւ «Սրատք ուղղափառ հաւատոյ եւ առաքինի վարուց»:
- * Նարեկացի «Մեկնութիւն Մեկնութեանց»ը:
- * Նարեկ եւ Կապադոկիան Հայրերը:
- * Նարեկ եւ Դիոնեսիոս Արսպակացի:
- * Սօսք ընդ Աստուծոյ եւ զրոյց Ս. Գրքի հետ:
- * Ծիսակատարութիւն եւ խորհուրդներ
- * Արեւելեան Եկեղեցիները եւ Եկեղեցւոյ ծիսակատարութիւնը:
- * Նարեկի ծիսական յիշողութիւնը:
- * Նարեկի երգուած բնագրերէն՝ 13րդ եւ 14րդ դարերը:
- * Նարեկ եւ Ապաշխարութեան Ս. Խորհուրդը:
- * Նարեկ, Ս. Հաղորդութիւնը եւ Քահանայութիւնը:
- * Նարեկ եւ միսթիքական հարասիքը:
- * Յոյսի ուժականութիւնը Նարեկի վախճանական տեսութեան մէջ:
- * Գրիգոր Նարեկացիի ներհուն սրբանկարները:
- * Նարեկ եւ Ս. Եփրեմ:
- * Նարեկ եւ Արաբական Մշակոյթը:



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՅԻՍՈՒՍԻ ԿՂԱՌԹԷ 1173
Երես, Մասնադրանք Յունար 1563, 55 էջ
Անկախ Վաք, Կիլիկիա